

«Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/4

3 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Սուսաննա Ավետյանի բողոքը «ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 22.12.2014 թ-ի թիվ 157 որոշման դեմ:

Քաղաքացի Սուսաննա Ավետյանի բողոքում բերված փաստարկները.

22.12.2014 թ-ին «Ֆինանսների նախարարության Եղեգնաձորի տարածքային հարկային տեսչության կողմից կազմվել և քննվել է վարչական գործ որպես անհատ ձեռներեց Սուսաննա Ավետյանի կողմից հարկային պարտավորությունները չկատարելու վերաբերյալ: Արդյունքում «ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի թիվ 157 որոշման համաձայն պետք է գանձվի 80.796 դրամ:

Սուսաննա Ավետյանը որպես անհատ ձեռներեց իր գործունեությունը դադարեցրել է 15.03.2011 թ-ին: Անհատ ձեռներեցի գործունեությունը դադարեցնելու գործընթացի ընթացքում համապատասխան մարմինը չի ներկայացրել, որ առկա են հարկային պարտավորություններ:

«ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի որոշման համաձայն, հարկային պարտավորությունները պետք է կատարի ֆիզիկական անձ Սուսաննա Ավետյանը: Բողոքաբերը կարծում է, որ այդ մարմինն իրավասու չէ ֆիզիկական անձանց վերաբերող որոշումներ կայացնել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ «Օրենսգրքի համաձայն, վարչական տույժ կարող է նշանակվել խախտումը հայտնաբերելու օրվանից երկու ամսվա ընթացքում, սակայն անհատ ձեռներեցի գործունեությունը դադարեցնելու ժամանակ նման որոշում չի եղել:

«ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ կողմից քննվող գործի վերաբերյալ որևէ ծանուցում չի ուղարկվել, հնարավորություն չի տրվել ներկայացնել որևէ բացատրություն:

Քաղաքացի Սուսաննա Ավետյանն առարկում է թիվ 157 որոշումը, քանի որ «ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից հաշվի չեն առնվել վերոնշյալ հանգամանքները:

Ելնելով վերոգրյալից՝ Սուսաննա Ավետյանը խնդրում է վերացնել «ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի թիվ 157 որոշումը:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետը, քննարկելով Սուսաննա Ավետյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 22.12.2014 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 80.796 դրամ, որից եկամտահարկ՝ 77.839 դրամ (50.300 դրամ ապառք, տույժ 27.539 դրամ), սոցիալական ապահովության վճար 2.957 դրամ: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ

ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի կողմից 22.12.2014 թ-ին ընդունվել է թիվ 157 որոշումը Սուսաննա Ավետյանից 80.796 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Եկամտահարկի գծով պարտավորությունն առաջացել է Ա/Ձ Սուսաննա Ավետյանի կողմից հարկային տեսչություն ներկայացված 2010 թ-ի տարեկան եկամտահարկի պարզեցված հաշվարկով: Վերջինիս համաձայն եկամտահարկի գծով պարտավորությունը կազմել է 230.000 դրամ, որից 179.700 դրամը մարվել է առկա գերավճարի հաշվին: Եկամտահարկի գծով ապառքի նկատմամբ՝ գումարով 50.300 դրամ, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթներով հաշվարկվել է 27.539 դրամ տույժ:

Սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունն առաջացել է 2011 թ-ի փետրվար ամսվա նվազագույն սոցիալական վճարը՝ գումարով 5.000 դրամ, չվճարելու հետևանքով: Նշված գումարից 3.088 դրամը մարվել է գերավճարի հաշվին, մնացած գումարի նկատմամբ հաշվարկվել է տույժ՝ գումարով 1046 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց նաև, որ Ա/Ձ Սուսաննա Ավետյանը 15.03.2011 թ-ին լուծարվել է: Ընդ որում, մինչև լուծարվելը Եղեգնաձորի ՏՀՏ բաժնի կողմից տրվել է տեղեկանք, որում արտացոլվել է միայն Ա/Ձ Սուսաննա Ավետյանի սոցիալական ապահովության վճարի գծով պարտավորությունը: Այսինքն, եկամտահարկի գծով պարտավորություն ունենալու վերաբերյալ որևէ տվյալ նշված տեղեկանքում չի արտացոլվել: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Ա/Ձ Սուսաննա Ավետյանի կողմից 2010 թ-ի տարեկան եկամտահարկի պարզեցված հաշվարկը Եղեգնաձորի ՏՀՏ է ներկայացվել մինչև տեղեկանքի կազմելը՝ 23.02.2011 թ-ին: Այսինքն, տեղեկանքի տրման պահին, ըստ էության, հարկային մարմնին արդեն իսկ հայտնի է եղել եկամտահարկի գծով պարտավորության առկայության մասին, որը, սակայն, տեղեկանքում չի արտացոլվել:

Բողոքարկող կողմի պնդմամբ, եթե Ա/Ձ Սուսաննա Ավետյանին մինչև լուծարվելը հայտնի լիներ եկամտահարկի գծով պարտավորությունների առկայության մասին իր կողմից կձեռնարկվեին համապատասխան միջոցներ դրանց մարման ուղղությամբ: Սակայն վարչական մարմնի, ըստ էության, ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում բողոքաբերը զրկվել է իր իրավունքն օգտագործելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ եկամտահարկի գումարները սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժի գումարը ենթակա է նվազեցման:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ղ ո շ ու մ է՝

ՀՀ ՖՆ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 22.12.2014 թ-ի թիվ 157 որոշումից նվազեցնել եկամտահարկի գծով հաշվարկված տույժը՝ գումարով 27.539 դրամ:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Կ. ՄԻՐՈՒՄՅԱՆ